ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

05.05.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Կ.Շեկոյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետն անդրադարձ կատարեց նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներին, տրված հանձնարարականների կատարմանը և առաջիկայում նախատեսված ծրագրերին, ներկայացրեց նաև անցած շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Վարչապետ Ն.Փաշինյանի՝ ՀՀ Լոռու մարզ կատարած պաշտոնական այցի արդյունքների, բացահայտված և արձանագրված խնդիրների, թերությունների ու բացթողումների, ինչպես նաև հետագա անելիքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Լոռու մարզպետը շնորհակալություն հայտնեց բոլոր գործընկերներին, ովքեր ներգրավված են եղել այցի նախապատրաստման, նաև՝ կազմակերպման և իրականացման գործընթացում, նշելով, որ վարչապետը ընդհանուր առմամբ գոհ է եղել կատարված աշխատանքների որակից և ժամկետներից, սակայն այդ ձեռքբերումները և արդյունքները պետք է լինեն շարունակական, հետևողական ու ամենօրյա բարեխիղճ ու պատասխանատու աշխատանքով ապահովվի նոր առաջընթաց և նոր զարգացում ու բարգավաճում Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի ազգաբնակչության համար:

Վերոգրյալի առիթով մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին, մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանին և մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

1) Անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներ տանել և սերտ համագործակցելով Վանաձորի համայնքապետարանի հետ, սեղմ ժամկետում իրականացնել Սանկտ-Պետերբուրգի փողոցի տնակային ավանի բնակիչների գույքագրում, ուսումնասիրել և վերլուծել նրանց սոցիալական կարգավիճակը և պայմանները, բնակարանային խնդիրները, հավաքագրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և մինչև 11.05.2025թ. ներկայացնել հիմնավորված առաջարկություններ՝ խնդրի լուծման

նպատակով, անհրաժեշտության դեպքում դրանք նաև ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

2) Մանրամասն ուսումնասիրել աղետի գոտում փաստաթղթերի, սեփականության իրավունքի կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ դեռևս չլուծված և խնդրահարույց հարցերը և նման խնդիրներ ունեցող բոլոր քաղաքացիների հետ կապված դեպքերը՝ դրանց արագ և հիմնավոր ու վերջնական լուծում տալու նպատակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղետի հետևանքների վերացման գործընթացը գտնվում է ՀՀ կառավարության վերահսկողության ներքո, և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

3. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ՝ Ռ.Պողոսյանը, Մ.Խեչումյանը, Գ.Բաղդասարյանը, Ա. Թումանյանը. Կ.Ադամյանը, Կ.Շեկոյանը, Է.Հախվերդյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

4. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների, մասնավորապես Լոռու մարզի մի քանի դպրոցների՝ միաձուլման միջոցով վերակազմավորման գործընթացին առնչվող ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ տեղեկատվություն:

Այդ առիթով մարզպետը հայտնեց իր դիտարկումները, կարևորեց կրթադաստիարակչական գործընթացում իրականացվող աշխատանքները, առողջ կրթական և բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումն ու պահպանումը, ինչպես նաև հանձնարարեց կազմակերպել հանդիպումներ և քննարկումներ նշված համայնքների բնակչության ու մանկավարժական կոլեկտիվների հետ, բացատրական աշխատանքներ տանել և պարզաբանել կառավարության որդեգրած քաղաքականության առավելությունները ու ակնկալվող արդյունքները, որոնք միտված են կրթության բարձր որակի ապահովմանը և զարգացած հասարակարգի ձևավորմանը:

5. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների մասին տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց՝

1) Հետևողական լինել և հարկ եղած դեպքերում միջոցներ ձեռնարկել համայնքներում բնակելի շենքերի բակերում ինքնակամ կառույցների գույքագրման ուղղությամբ և դրանց հետագա ճակատագրի վերաբերյալ օրենքին համապատասխան ներկայացնել կոնկրետ առաջարկություններ:

2) Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների կողմից հողերի աճուրդ-վաճառքների գործընթացների օրինականության պահպանման նկատմամբ:

6. Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝

Եռօրյա ժամկետում ներկայացնել տարբեր ժամանակահատվածներում համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների և այլ խնդրահարույց կառույցների ու տարածքների օտարման գործընթացների իրավական հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն:

7. Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ հետևողականություն դրսևորել և անձնական պատասխանատվություն կրել մարզպետարան մուտքագրված քաղաքացիների դիմումներին սահմանված ողջամիտ ժամկետներում և սպառիչ ու բովանդակալից պատասխան ապահովելու հարցում, բացառել անհարկի ուշացումները և խնդիրների լուծման նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, անել հնարավորինս, որպեսզի քաղաքացիները բավարարված լինեն տրված պատասխանով:

8. Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին.

1) Հետևողական աշխատանքներ իրականացնել համայնքապետարանների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման ուղղությամբ, հետևել, որպեսզի մրցույթների կազմակերպումն ու անցկացումը իրականացվի օրենսդրության պահանջներին համապատասխան, անաչառության ապահովման, դժգոհությունների բացառման, հարցաշարերի միատեսակ կիրառման պայմաններում, ապահովելով թափանցիկություն և հավասար հնարավորություններ բոլոր թեկնածուների համար, մրցույթների և արդյունքների վերաբերյալ մշտապես ներկայացնել տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություններ՝ մրցույթների անցկացման գործընթացի բարելավման նպատակով:

2) Եռօրյա ժամկետում ներկայացնել մանրամասն տեղեկատվություն մարզի համայնքներում 2024թ. ընթացքում անցկացված համայնքային ծառայության այն մրցույթների վերաբերյալ, որոնց դիմորդների թիվը մեկ անձ է եղել, ինչպես նաև, թե դրանցից քանիսում հաղթող չի ճանաչվել:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99